

արշաւը դէպի Աղուաններու երկիրը յանձնա-  
բարելի կ'ընեն:

Ասոր հակառակ Պլինիոսի աշխատանք ար-  
շաւին ընդհանուր պատճառներն էապէս տը-  
կար են: Թէ ներոն ձեռնարկած է մեծ պատ-  
րաստութեամբ սարմատական ալէկոծեալ  
յորձանքը թմբարգել ընել, անժխտելի է.  
բայց ինչպէս տեսանք այս նպատակին աւելի  
կը ծառայէր Աղուաններու երկիրն գրաւումը  
քան թէ Ալաններու դէմ արշաւ մը, որ միշտ  
առանց տեւական արդիւնքի զինուորական  
ցոյց մը պիտի մնար: Շապոյ<sup>19</sup> եւ Տէօրլեր<sup>20</sup>  
կ'առարկեն, թէ հոռոմէական շահերը Դա-  
րիէլի՝ վրական կրճին գրաւումովը լիապէս  
ապահովուած էին, մինչ Դերբենդի՝ Աղու-  
աններու կերճը ճամբայ կը բանար միայն  
դէպի Պարթեաններու պետութիւնը եւ դէպի  
անոր հայ եւ ատրպատականեան արբանեակ-  
ները: Կարծեմ ասոր հակառակ կըցայ ապա-  
ցուցանել, թէ ներոնի վարչական խորհուրդ-  
ները հոռոմէական շահերու նախկին շրջա-  
նակէն շատ անդին կը ձգուէին եւ կը ձգնէին  
հետզհետէ պարթեական պետութիւնն ալ  
աւելի իրենց սահմաններու մէջ փակելու<sup>21</sup>:  
Ուրեմն Տակիրտոսի աւանդութիւնն այս կող-  
մանէ ալ առարկութիւն չի վերցնիր:

Տակիրտոսի տեղեկութեան դէմ է ուրեմն  
միայն Պլինիոսի ճշտութիւնը, որ եթէ իբրեւ  
ժամանակակից քաղաքագէտի մը ճշտու-  
թիւնն արհամարելի չէ, սակայն բանասիրո-  
րէն ալ պէտք է որ գերազնահատուի: Վասն  
զի ճիշդ կասկեան եւ անդրկասկեան երկիր-  
ներու ստորագրութեան մէջ մասնաւորա-  
պէս վատ է իր աշխատանքը: Հոս համառո-  
տագիրներու այնպիսի առատութիւն մը ունի  
իր արամագրութեան տակ, որ չէ կըցած  
տիրանալ անոնց եւ տեղ տեղ անհնարին  
խառնակութիւն մը ստեղծած է<sup>22</sup>: Այսպէս  
Կասպեան ժողովուրդը, զոր քիչ առաջ Կուրէ  
հարաւ կը գետեղէ, քանի մը տող ետքը բո-  
լորովին անփութօրէն՝ կասպեան դոներէն  
հիւսիս մինչեւ ծով, վրկանեան արեւմտեան  
սահմանին վրայ կը տեղաւորէ<sup>23</sup>: Եթէ իր  
տեղեկութիւններու արժէքը քննել կ'ուզենք,  
ստիպուած ենք արեւելեան կաւկասեան եր-

կիրներու համար իր առջեւն ունեցած ազ-  
րիւրներու հարցը յարուցանել:

Ինքը հինգ հեղինակ կ'անուանէ, որոնցմէ  
կախում կրնայ ունենալ խնդրական մասե-  
րուն մէջ: Կուրնելիոս նեպոսը կը յիշէ կա-  
կասեան կիրճերու լայնութեան մասին տե-  
ղեկութեան մը առթիւ (2. 31). Վարրոնի  
կը պարտի Կասպեան ծովու իր ստորագրու-  
թիւնը եւ անոր ջրոյն անուշութեան ծանո-  
թութիւնը (2. 38, 51). Ագրիպայի քար-  
տէսին վրայ կարգացած է Կաւկասի արեւ-  
ելեան վերջաւորութեան սէպ եզերքը (2.  
39). Կաւկասեան անցքերու ընդարձակու-  
թեան եւ Սելեւկոս Նիկատորի ջրուղի մը  
չինելու ճրագրի մասին իբրեւ աղբիւր կը  
յիշէ Կլաւդիոս Կայսեր Ասիայի վրայ գրած  
գործը (2. 31). վերջապէս գործածած է  
Կորբուզոնի դէտերու քարտէսը (2. 40):

Այս աղբիւրներէն նեպոս եւ Վարրոն  
հիմնուած են Պոմպէոսի հետախուզութիւն-  
ներու վրայ, որոնք իր անձնական գրագրին՝  
Թէօփանէս Մեալիւնացոյն ձեռքով հանրու-  
թեան մատչելի եղան: Ագրիպայա կրնար դեռ  
գործածել Վենտիտիոսի տեղեկութիւնները,  
որ իբրեւ Անտոնիոսի պատուիրակը մինչեւ  
Կասպից ծովու եզերքն յառաջացած էր<sup>24</sup>:  
Կլաւդիոս կ'երեւայ, թէ միայն գրական ա-  
ւանդութիւն մը օգտագործած է, ինչպէս կը  
տեսնուի Պատրոկլէսէ փոխ անուած Իսթ-  
մոսի լայնութեան մասին գարմանալի տե-  
ղեկութենէն: Պլինիոսի այս երկիրներու վրայ  
տուած նոր տեղեկութիւններու համար կը  
մնայ ուրեմն միայն Կորբուզոնի դէտերուն  
քարտէսը եւ տեղեկագիրը:

Թէօփանէսի առաջին դուրս, որ ամէ-  
նէն լաւ պահուած է Սարաբոնի քով, Պլի-  
նիոս երկու նոր նշանակելի տուեալներ ունի:  
Նա իբրեւ առաջինը գիտէ թէ Աղուանները  
նաեւ լեռնաշղթային հիւսիսակողմեան նեղ  
եզերադաշտը կը բնակէին (2. 39), եւ դար-  
ձեալ նա գիտէ իբրեւ միակը, թէ կայ դեռ  
արեւելեան Կաւկասի ուրիշ անցք մը, որ  
երաւամբ Կասպից դուռ անունը կը կրէ (2.  
40): Այս սերտիւ կապուած երկու տեղեկու-  
թիւններն իբրեւ մեր ծանօթութեան համա-  
ձայն միայն Կորբուզոնի դէտերէն կրնան  
բղիւխի, որոնք այս ազերսով ալ կը յիշուին  
իրմէ (2. 40): Այսպէս նոյն իսկ Պլինիոսի

<sup>24</sup> Պլուտ. Անտ. 34, Դիոն. Լէ. 4:

ներկայացումէն կը հետեւի, թէ ասոնք ոչ  
լեռնաշղթային մէջտեղն եղող կիրճէն, այլ  
արեւելք գտնուող Դերբենդի կիրճէն օգ-  
տուած են:

Ի՞նչպէս ուրեմն Պլինիոս իր խոտորող  
կարծիքին յանգած է. կ'երեւայ թէ ինքն իսկ  
զոհ եղած է այն սխալին որուն դէմ եռան-  
դով կը կուռի: Իմ կարծիքովս իր Կասպեան  
համառոտագիրներու հանրածանօթ անկար-  
գութեան համընթաց՝ իր հակահերոնեան տե-  
սութիւնները պատճառ եղած են այս դժպի-  
խաղին: Հասարակութիւնը դէպի Կասպեան  
դոները յայտարարուած արշաւին առարկան  
դարձուցած է վրական կիրճը եւ այդ ար-  
շաւը կապած է սարմատական կոիւններու  
հետ<sup>25</sup>: Պլինիոս Կորբուզոնի դէտերու եւ ա-  
նոնց քարտէսին կը պարտի այս սխալին ուղ-  
ղումը<sup>26</sup>: Սակայն իր ծանօթագրութիւննե-  
րու խառնակոյտին մէջ այս կապը կորսնցու-  
ցած է եւ հոռոմէական հասարակութեան  
սխալ ըմբռնումը՝ առելի կայսեր պատուի-  
րակներուն վերադրելով՝ անոր ուղղումը  
գործածած է այն իսկ անձերուն դէմ, որոնց  
կը պարտի այդ ճշգրտումը: Ասով իրեն բաղ-  
ձալի առիթ մը կը ներկայանար անգամ մը  
եւս մեծախօս, բայց անգործ ներոնին վրայ  
նշաւակի ցնցոտի մը նետելու: Ասոր հակա-  
ռակ Տակիրտոս հոս ալ արքունի աղբիւրներէ  
աննելով, կայսեր ճշմարիտ դիտումները պա-  
հած է ապագայ սերունդներուն<sup>27</sup>:

Հիմայ հարց կը բարձրանայ, թէ ինչո՞ւ  
Աղուաններու երկիրը եւ վրկանը հոռոմէա-  
կան պետութեան համար իրենց այս կա-  
րեւոր նշանակութիւնը ստացած են: Այս  
հարցին լուծումին նուիրուած է ներկայ  
գլուխս: Առ այս նախ պէտք ենք զննել ա-  
րեւելեան Իրանի քաղաքական դիրքն ա՛յն-  
պէս, ինչպէս կերպարանաւորեցաւ ան մեր  
թուականին դարադարձին՝ առաջին պար-  
թեական պետութեան քայքայումէն ետքը:  
Այն ժամանակի քաղաքական վայրափոխում-  
ները հնարաւորութիւն պիտի տան մեզի դա-  
տաստան մը կազմելու դաշնակցութեան կրն-  
քումի վայրկեանին վրկանեան տէրութեան ու-  
նեցած ընդարձակութեան եւ նշանակութեան

<sup>25</sup> Տես յետոյ Գլ. Գ. յոդ. 2:

<sup>26</sup> Նոր Աղբիւրանդը. ներոնի հետախուզութեանն է  
յամենայն դէպս Աղբիւրանդի պատմիչին համապա-  
տասխան տեղիքը:

<sup>27</sup> Տակիրտոսի այս աղբիւրին մասին տես Klio  
ԺԹ:

վրայ: Յետոյ պիտի քննենք վրկանի եւ Աղու-  
անից երկիրն երթեւեկային աշխարհագրա-  
կան դիրքը, միանգամայն պիտի տեսնենք  
կարեւորութիւնը նաւազնացութեան այն  
ճամբուն, որ Բակտրիայէն հոռոմէական Կող-  
քիսի արեւելեան սահմանը կը հանէր:  
Ասոնցմէ պիտի հետեւին ներոնեան հիւսիս-  
արեւելեան քաղաքականութեան երեք կա-  
րեւոր հանգրուանները. ուժեղացում պոն-  
տական մեկնակէտի դիրքին, Աղուաններու  
հպատակեցումը եւ անդր-կաւկասեան ծո-  
վային երթեւեկի ձեռնարկը:

(Շարունակելի):

Հ. Մ. ՀԱՊՈՋԵԱՆ



### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍՏԻՎԱՆՆԵՐՈՒ ԹԱՄԱՆ- ԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 833—887 ՏԱՐԻՆԵՐՈՒ ՅԲՋԱՆԻՆ

Հայաստան ալ-Մութեմաքքիլի ժամա-  
նակ (Հ. 232—247 = 847—861) նոր խոռ-  
վութիւններ ծագեցան եւ ամիրապետը Հայ-  
վութիւններ ծագեցան եւ ամիրապետը Հայ-  
աստանի եւ Ատրպատականի ոստիկան ա-  
նուանեց Աբու Սայիդ Մուհամմէդ իբն Ի-  
սաֆ ալ-Մերվեքի: Սակայն ասիկա յանկար-  
ծամահ կ'ըլլայ, յառաջ քան իրեն յանձնուած  
նահանգները հասած ըլլալ: Տարբեր<sup>46</sup> ա-  
նոր մահն 236ին (850—851) կը զնէ: Ըստ  
Թովմաս Արծրունցի<sup>47</sup> «Աբու Սեթ» արգէն  
յառաջագոյն ոստիկան անուանուած էր, սա-  
կայն տակաւին հայ աշխարհն ոտք չէր կո-  
խած, երբ հայ իշխանները պահանջուած  
հարկերն անոր ուղարկեցին եւ խնդրեցին,  
որ ետ դառնայ, որով նա Մամառա դարձաւ  
եւ անդրազոյն հարկերը վերցնելն Արզնի ա-  
միրային՝ Մուսա իբն Չուրարային թողուց:  
Վաստուրական Ալա անունով մէկը հարկերը  
պիտի ժողվէր: Սակայն երկուքն ալ հայերէն  
պարտութիւն կրեցին: Աբու Սայիդ, որ դար-  
ձեալ դէպի Հայաստան մեկնեցաւ, ճանա-  
պարհորդութեան ժամանակ յանկարծ մե-  
տաւ<sup>48</sup> եւ Սալիֆան հայկ. տոմարի 300ին

<sup>46</sup> III, 1407. Իրն ալ-Սթիւր VII, 37, de Goeje, Fragm. II, 546:

<sup>47</sup> էջ 107—108. Համա. Թովմաս MSOS:

<sup>48</sup> էջ 116:

<sup>19</sup> Շապոյ, էջ 37 յջ. եւ 367 յջ.:  
<sup>20</sup> Klio Թ, 18:  
<sup>21</sup> Տես Գլ. Ա, յոդ. 4:  
<sup>22</sup> Չ. 46 յջ. տես առ այս Կիւլինդ Ի PWRE.  
VIII, 434, յոդ. Herakleia 22:  
<sup>23</sup> Չ. 45, տես առ այս Herrmann, 2273:

(851ին = չ. 236ին) Արու Սայրիի որդին Իւսուֆն անուանեց<sup>49</sup>: Բելազորի<sup>50</sup> այս անուանումն ալ-Մուսթեփաքիլի կառավարութեան երկրորդ տարին կը փոխադրէ, որ, որովհետեւ ալ-Վաթիք 232ի Ձուլ Հաջջայի 24ին վախճանած էր<sup>51</sup>, 234 տարւոյն համապատասխանելու է: Հաւանականաբար Բելազորի հոս դանկիւ կը շփոթէ անոր հօրը հետ, իսկ այս պարագային թուով Արծրունւոյ այն պատմութեան հետ թէ Արու Սայրի յառաջագոյն անուանուած է, համաձայնելու է: Նշանակելու բան է, որ Բելազորի այս տեղ նաեւ փոխոտտիկան մը՝ ալ-Ալա իրն Ահմէդ, կը յիշէ, որ իւր անդթուութիւններով ժողովուրդն արդար ցամառն կը շարժէ:

Իւսուֆ իրն Արի Սայրի Հայաստան գնաց, սակայն իւր անդթութեամբ ողբներն աւելի դառնացուց<sup>52</sup>, այնպէս որ ապստամբութիւնն աւելի սաստկացաւ եւ նոյն իսկ իւր խտուրթեանը համար կեանքն ալ վրայ տուաւ<sup>53</sup>: Մշոյ մէջ պաշարուեցաւ եւ սպանուեցաւ<sup>54</sup>, երբ Մուսա իրն Ձուրարա, անշուշտ երբեմնի հարկերը ժողովոյն, ալըստամբներու կողմն անցած կը կոտէր<sup>55</sup>, որուն համար ապա Բուղայէն կարանաւորուեցաւ: Ըստ Տարբրիի<sup>56</sup> Իւսուֆ 237 տարւոյն Ռամազանին սպանուեցաւ:

Գարնան 852ին (238ին) Բուղա երէցն<sup>57</sup> առաքուեցաւ, որ խորամանկութեամբ, բռնութեամբ եւ անդթութեամբ ամբողջ Հայաստան, ինչպէս նաեւ Առան եւ Վրաստան հնազանդեցուց եւ այն բոլոր փոքրիկ իշխաններն, որոնք իւր դէմ ելած էին, կալա-

<sup>49</sup> Տար. III, 1407, Իրն ալ-Աթիր VII, 37, Եսկուրի II, 598. Ղազարեան 51: Ըստ Արու 'լ Ֆարաջի, հրտ. Սալահիի, 247, 237ին:  
<sup>50</sup> Բելազ. 211:  
<sup>51</sup> Տար. ԻII, 1364:  
<sup>52</sup> Ի մէջ այլոց Բազարատ Բազրատունին իրեն կը հրապարէ եւ կալանաւորած Մամառա կ'առաքէ (Թով. Արծ., էջ 118, Բելազ. 211, Եսկ. II, 598, Տար. III, 1408:  
<sup>53</sup> Բելազ. 211:  
<sup>54</sup> Իր թէ Սեփաղա իրն Արդ ալ-Համիդ բլ. Գահ-հաֆի, որ յառաջագոյն շատ անգամ Ռալիֆային դէմ կոտած էր, բայց վերջէն անշիւթիւն ընդունած էր, գանի անոր սպանուողով վտանգէն զուստացուցած է (Տար. III, 1409):  
<sup>55</sup> Տար. III, 1409, de Goeje, Fragm. II, 547:  
<sup>56</sup> III, 1408, Իրն ալ-Աթիր VII, 38, de Goeje, Fragm. II, 546-547, Արու 'լ Ֆարաջ 247:  
<sup>57</sup> Ըստ Տարբրիի III, 1409, Բուղա կրտսերը, սակայն միւս բոլոր աղբիւրները հոս Բուղա երէց կ'անուանեն. Բելազ. 211, Եսկ. II, 598, de Goeje, Fragm. II, 547: Արու 'լ Ֆարաջ 247, Իրն ալ-Աթիր VII, 39:

նաւոր Մամառա տարաւ<sup>58</sup>: Բուղայի դէպի Տփղիս արչաւանքն, որ Վրաստանը բոլորովին հնազանդեցնելով եւ Իսհակ իրն Իսմայիլն եւ ուրիշներն, որոնք խալիֆայի դէմ ապստամբած էին, գլխատելով վերջացաւ, ըստ Տարբրիի<sup>59</sup> տեղի ունեցաւ 238ին: Բուղա 241ին Մամառա վերադարձաւ<sup>60</sup> եւ Հայաստանի ոստիկան անուանուեցաւ Մուհամմէդ իբն Խալիդ իբն Եազիդ իբն Մագբալ<sup>61</sup>:

Թէ որչափ ժամանակ Մուհամմէդ իւր պաշտօնին մէջ մնաց, չենք գիտեր: 248ի Ռամազանին<sup>62</sup> (Նոյեմբեր 862), ըստ այսմ արդէն ալ-Մուսթայիլն տակ ըստ Տարբրիի<sup>63</sup> Հայաստանի ոստիկան անուանուեցաւ Ալի իբն Եահեա ալ Արմենի, որ Պալիզ իրն Եազիդի ոստիկանութեան ժամանակ ոստիկանին բանակներու դէմ ելաւ<sup>64</sup>, ալ-Մամունէն ներում ընդունեցաւ եւ ապա ալ-Մուսթայիլն տակ կը ծառայէր, երկար ժամա-

<sup>58</sup> Թովմաս Արծ., էջ 122-200:  
<sup>59</sup> III, 1414-1416, de Goeje, Fragm. II, 548:  
<sup>60</sup> Բելազ. 212:  
<sup>61</sup> Եսկ. II, 599: St. Martin, Mémoires I, 347, 418 եւ Petermann, De ostikanis 7, իրբեւ Բուղայի յաջորդ կը յիշեն Շէհի մը, որ իւր թէ 4 տարի ոստիկան եղած է: Petermann իւր աղբիւր յառաջ կը բերէ Չամչեան, Բ., 675, 688, որ իւր թէ այս տեղիկութիւնը Յովհ. Կաթողիկոսն է Վարդան Մեծէն զաղած է: Սակայն ես ոչ Յովհ. Կաթողիկոսի (St. Martinի թրգմ.), ոչ ալ Վարդանի թով (Էմինի թրգմ.) այս անունը կրցայ գտնել: Ըստ Չամչեանի, կ'ըսէ Petermann, այս Շէհին Ատրպատականի ոստիկանին՝ Մուհամմէդին, այսինքն՝ Մուհամմէդ իբն Պալիզի ստորակարգ էր: Սակայն իւր թէ Վարդան գանի անկախ ոստիկան կը ճանչնայ: Որովհետեւ Եսկուրի (եւ նաեւ Մովսէս Կաղանկատուացի 267) զՄուհամմէդ անմիջապէս Բուղայէն հորը կը յիշէ, ստաջներ ճիշդ ըլլալու է: Թովչեան, MSOS VII, 2, 123, գիտնելով թովմ. Արծրունւոյ վկայութեան (էջ 192, 195) կ'ըսէ՝ թէ Բուղա 853ին վերադարձին Նախիջևանի Արբաճաճ ամիրան իրբեւ Հայաստանի հազարապետ եւ երկրին թաղաւորական հարկերու վրայ հակէ թողոց: Սակայն Brossetի թարգմանութենէն այս չի հետեւիր, որովհետեւ հոն միայն այս կ'ընթեւունք՝ թէ երբ Բուղան իւր Բեկրապայի (Պարտաւի) ձմեռանոցը կը քաշուէր, Արբաճաճին յանձնեց, որ Հայաստան իր գործերը վարէ:  
 \* Հեղինակին ակնարկած Չամչեանի տեղիքն է Եսկուրի. «(Աշոտ) սկսաւ պայազատել զիշխանութիւնն Բագրատունեաց եւ ունիլ զպարապետութիւնն Լայոց ընդ խնամակալութեամբ վերակացուիմ Շէխայ. Բանգի դեռ եւս չէր եկեալ ոչ ոստիկան, այլ՝ Շէխի միայն իրբեւ վերակացու ցատէր ի Գուիմ՝ ընդ իշխանութեամբ ոստիկանին Ատրպատականի, որ կոչուր Մահմուտ» (Բ. էջ 675, հմմտ. եւ էջ 688): Ասոր հայոց Յովհ. Կաթողիկոսի տեղիքն է թէ նախարարներն իրենց բաղանիքն, որ Աշոտ իրենց բազաւոր ըլլայ. «գեղուցանեն ամիրապետին ի ձեռն ոստիկանին Յիւէի՝ որդւոյն Շէխայ» (էջ 139). տե՛ս այս մի եւ նոյն յօսքը Վարդանի թով (էջ 85): (Մ. Թ.):  
<sup>62</sup> Ըստ Եսկուրիի II, 606, 249ին:  
<sup>63</sup> III, 1508, Իրն ալ-Աթիր VII, 78, Ատրպիկ, էջ 110:  
<sup>64</sup> Եսկ. II, 566:

նակ սահմանադաւանները կը կառավարէր եւ 237-246 տարիներուն գրեթէ ամէն տարի Բիւզանդացուց դէմ արչաւանքի կը ձեռնարկէր<sup>65</sup>: Այս ոստիկանութիւնը սակայն երկար չտեւեց, որովհետեւ Ալի յաջորդ տարին Բիւզանդացուց դէմ վերստին արչաւանքի մը ձեռնարկեց, յորում կեանքը կորսնցուց<sup>66</sup>: Սակայն անոր ոստիկանութիւնը Հայաստանի համար մեծ նշանակութիւն ունեցաւ, որովհետեւ նա Աշոտ Բագրատունւոյն, որ իւր հօր Սմբատի նման միշտ հաւատարիմ եղած էր եւ այս պատճառաւ այն քիչերէն էր, զորոնք Բուղա իրենց երկրին մէջ թողոց, իշխանաց իշխանի, ըստ Տարբրիի<sup>67</sup> بطریق اجماعاً պատիւն տուաւ: Այս դէպքը պատահած է ըստ Ասողկի<sup>68</sup> հայկ. թուակ. 311ին (862-863)<sup>69</sup>:

Ալի իրն Եահեայէն ետքն ոստիկան եղաւ ալ-Ալա իբն Ահմէդ ալ-Ազդի: Նա արդէն յառաջագոյն, Իւսուֆ իրն Արու Սայրիի ներքեւ Հայաստանի մէջ պատերազմ մղած է<sup>70</sup> եւ Տարբրիէն 251ին<sup>71</sup> եւ 252ին<sup>72</sup> իրբեւ Հայաստանի ոստիկան<sup>73</sup> կը յիշուի: Յետոյ, 260 տարւոյն մէջ Տարբրի<sup>74</sup> գանի Ատրպատականի ոստիկան<sup>75</sup> կ'անուանէ եւ կը պատմէ՝ թէ որովհետեւ նա կաթուած ունեցած էր, Պալիֆայէն վար առնուեցաւ, սակայն այսու տփզո՜հ՝ նոր անուանուած ոստիկանին՝ Աբու-ր Ռուդայիմի Օմար իբն Ալի իբն Մուրրի հակառակ ելաւ եւ սակէ սպանուեցաւ<sup>76</sup>:

<sup>65</sup> Տար. III, 1414, 1419, 1420, 1434, 1447, 1449:  
<sup>66</sup> 249ի Ռամազանին, Տար. III, 1509-1510, Իրն ալ-Աթիր VII, 79, հմմտ. Եսկ. II, 606:  
<sup>67</sup> III, 1408:  
<sup>68</sup> Պես. 1885, էջ 157-158:  
<sup>69</sup> Mlaker, ՀԱ 1927, 882, Laurent 267 346, Defrémery, Mémoires sur l'histoire orient. I, 8-9, հմմտ. Դաղարչեան 42, Թովչեան, MSOS VII, 2, 136, 127, Մամուէլ Անեցի, էջ 95:  
<sup>70</sup> Թովմ. Արծ., էջ 111, Բելազորի 211:  
<sup>71</sup> Տար. III, 1668, Իրն ալ-Աթիր VII, 109:  
<sup>72</sup> Տար. III, 1668, Իրն ալ-Աթիր VII, 115:  
<sup>73</sup> 251 տարւոյն մէջ իրբեւ Բուղա կրտսերոյն

փոխոտտիկան على ابي الخراج والفايع ارمينية و عامل ارمينية 252 տարւոյն մէջ իրբեւ Բուղա կրտսերոյն Zambaur, Manuel 179, Ղազարեանի սխալն, որ գանի ալ Մուսթայիլի ժամանակ ոստիկան կը համարէ, նաեւ Laurentի գրքին մէջ, 347, անցած է:  
<sup>74</sup> III, 1886:  
<sup>75</sup> Իրն ալ-Աթիր VII, 187:  
<sup>76</sup> Ատրպատականի այս նոր ոստիկան իրն ալ-Աթիր ուրիշ տեղ մը, VII, 199, ուր նոյն դէպքն 261 տարւոյն ներքեւ կը պատմուի, Մուհամմէդ իրն Օմար իրն Ալի իրն Մուրա աթ Թայի ալ-Մուսթիլի կ'անուանէ:

Հայաստանի ոստիկանութիւնն արդէն 256ին<sup>77</sup> կամ 257ին<sup>78</sup> ստիպուած էր Խաա իբն ալ Շայխ (Շէխ) իբն ալ Սալիլ ալ Շէյբանիի տալ:

Այս ալ-Ալա իրն Ահմէդի ոստիկանութեան ժամանակամիջոցին կը վերաբերին քանի մը դահեկաններ, որոնք Հայաստան (°) դրոշմուած են եւ ալ-Հասան իբն Խաա անուանով մէկու մ'անունը կը կրեն: Ասոնք 250ին<sup>79</sup> եւ 252ի եւ 255ի<sup>80</sup> ժամանակամիջոցին դրոշմուած են: Որովհետեւ այս անուամբ անձ մը տեղ մը չի յիշուիր, այս դրամներու մասին ընդհանրապէս բան մը չեմ կրնար ըսել: Բրիտանական թանգարանին մէջ<sup>81</sup> տակաւին դահեկան մը կը գտնուի 253էն, որուն վրայ չէ նշանակուած՝ թէ ուր դրոշմուած է, որ գուցէ նաեւ այս կարգին կը վերաբերի: Ասոր վրայ ընդհանրապէս խալիֆայ մըն ալ չի յիշուիր: Ամիրայի անունը Լէյն Փուլ Ահմէդ իբն Խաա կարդաց եւ դրամը Շէյբանեան Ահմէդ իրն Խաա իրն ալ Շայխի վերագրեց: Սակայն այս նոյնացման արդեւէր կ'ըլլայ թուականն, որովհետեւ այս ժամանակները տակաւին Ահմէդին հայրն, 256ին Հայաստանի ոստիկան անուանուած Խաա իբն ալ Շայխ կենդանի էր, մինչ Ահմէդ հաղիւ 280ական թուականներուն դեր մը խաղայ<sup>82</sup>:

Որչափ ժամանակ այս Խաան Հայաստանի ոստիկան եղաւ չենք գիտեր: 261ին (874/5ին) ալ-Մուրաֆիդի որդին Չաֆար ալ-Մուփալվիդ բոլոր արեւմտեան երկրներուն՝ Ափրիկէի, Եգիպտոսի, Ասորիքի, Միջագետքի եւ Հայաստանի ընդհանուր կառավարելի անուանուեցաւ<sup>83</sup>: Իսայի մասին կ'ըսէ Տարբրի<sup>84</sup> թէ 266ին Ամիդ էր, ապա 267ին Միջագետքի մէջ ծագած խոտուութեանց մասնակից կ'ըլլայ<sup>85</sup> եւ 269ին վախճանեցաւ<sup>86</sup>: 266ին (879/80ին) Հայաստանի, ալ-Մուսթիլի եւ Գիլյար Ռարիայի ոստիկանութիւնն իսկակ իբն կուրդաչիֆին անցան<sup>87</sup>, սակայն արդէն

<sup>77</sup> Տար. III, 1841, Իրն ալ-Աթիր VII, 164:  
<sup>78</sup> Եսկ. II, 621:  
<sup>79</sup> T. Nr. 1977. Յետակ. եղծուած ալ-Մուրաֆիդի խալիֆայի գրութեամբ, ըստ հետաւորի յառաջակ. հին կնիքով:  
<sup>80</sup> T. Nr. 1969, ալ-Մուրաֆիդի խալիֆան:  
<sup>81</sup> Br. M. IX, 191, Nr. 429 tt.:  
<sup>82</sup> Տես ստորեւ ծանօթ. 106:  
<sup>83</sup> Տար. III, 1890, Իրն ալ-Աթիր VII, 191:  
<sup>84</sup> III, 1942:  
<sup>85</sup> Տար. III, 1992:  
<sup>86</sup> Տար. III, 2048:  
<sup>87</sup> Տար. III, 1992, հմմտ. Թովչեան, MSOS

269ին Տարարի<sup>88</sup> Իրն Կունդալիքի պարզապէս ալ-Մուուշիլի եւ ալ-Ջէզիրէյի ոստիկան կը ճանչնայ եւ Իրն ալ-Աթիր<sup>89</sup> կ'ըսէ՝ թէ 269ին, երբ Իսա մեռաւ, Հայաստանի ոստիկան էր Դիյար-Բէէր:

Թովմաս Արծրունի<sup>90</sup> եւ Մով. Կաղանկատուացի<sup>91</sup> ապստամբութեան մը մասին կը պատմեն, զոր յառաջ բերած էր Իսայէն անուանուած Առանի ոստիկանը՝ Մուհամմէդ Իրն Արդ-ալ Վահիդ<sup>92</sup>: Ըստ Թովմ. Արծրունու Իսա ամբողջ տարի մը՝ այս Յամանիկի դէմ կռուեցաւ առանց յաղթել կարենալու, որուն վրայ Ասորիք քաջուեցաւ եւ այս բանն երեք անգամ կրկնուեցաւ: Կաղանկատուացու չամաճայն Մուհամմէդ մինչեւ Իսայի մահն, 13 տարի, անոր դժուարութիւններ պատճառեց: Ըստ այսմ Կաղանկատուացու պատմուածքէն կարելի պիտի ըլլայ հետեցնել՝ թէ Իսա ամբողջ ժամանակ, 256էն մինչեւ 269 Հայաստանի ոստիկան էր, ըստ այսմ Իրն Կունդալիքի ոստիկանութիւնը միայն շատ կարճ ժամանակ կրնայ եղած ըլլալ: Իրն ալ-Աթիրի տեղեկութիւնն ալ ասոր հետ չամաճայնի կը թուի:

Ըստ Յովհ. Կաթողիկոսի<sup>93</sup> Իսայի ոստիկանութեան ժամանակ կ'իյնայ Աշոտ Ա.ին Հայաստանի թագաւոր պսակուելը: Ստեփ. Օրբէլեան<sup>94</sup> այս դէպքը հայկ. թուակ. 334ին = 885ին (Հ. 272—273ին) կը դնէ<sup>95</sup>: Նորագոյն քննութեանց չամաճայն կ'երեւայ՝ թէ այս երկու տեղեկութիւններն ալ սխալ են եւ պսակումը հազիւ 336ին = 887ին, ինչպէս Ասողիկ կը պատմէ<sup>96</sup>, տեղի ունեցած է<sup>97</sup>: Իսայէն ետքը յաջորդ ոստիկանն էր Ահ-

VII, 2, 120. Թովմաս, հոս էջ 125, կը շփոթէ Իսահ Իրն Կունդալիքն ասոր Մուհամմէդ որդուցն հետ եւ Հայաստանի ոստիկանը կ'անուանէ Մուհամմէդ Իրն Իսահ Իրն Կունդալիք: Այս մի եւ նոյն սխալը մտած է նաեւ Laurentի գրքին մէջ, 347, թիւ 94:  
<sup>88</sup> III, 2037:  
<sup>89</sup> VII, 278:  
<sup>90</sup> էջ 218:  
<sup>91</sup> էջ 267:  
<sup>92</sup> Marquart, ՀԱ 1915, 133 (= Südarmerien, էջ 317), Թովմաս Արծր. Յամանիկի կ'անուանէ:  
<sup>93</sup> էջ 139:  
<sup>94</sup> էջ 128:  
<sup>95</sup> Գաղարչեան, անդ 71, Defrémery, Mémoires sur l'histoire orient. I, 9, St. Martin, Mémoires, I, 349:  
<sup>96</sup> էջ 157:  
<sup>97</sup> Համտ. Mlaker, ՀԱ 1927, 881—886. Marquart, ՀԱ 1920, 106. Ղազարեան, Zeitschr. für arm. Phil. II, 193:

մէդ իբն Խալիդ<sup>98</sup>, որ, ըստ Արծրունուցն<sup>99</sup>, հայոց բաղձանքին վրայ առաքուեցաւ, ըստ որում զասիկա Մուհամմէդ Յամանիկէն աւելի դերադաս կը համարէին, որ սակայն ապստամբին հետ միացաւ եւ Աշոտը կործանելու կ'աշխատէր: Սակայն Աշոտ յաջողեցաւ զանիկա կարանաւորել եւ երկրէն վտարել<sup>100</sup>: Marquart<sup>101</sup> ասոր ոստիկանութիւնն 886—887ին կը դնէ: Դժուարաւ թէ Թովմաս<sup>102</sup> Իրաւունք ունենայ, երբ ամբողջ յարակէպն Ահմէդ Իրն Խալիդի հետ մէկտեղ Իսահ կ'ընէ Կունդալիքի անուանումէն յառաջ, ըստ այսմ 266էն յառաջ, կը փոխադրէ<sup>103</sup>: Բայց արդէն այնպէս կը թուի՝ թէ նա վերջէն<sup>104</sup> այս կարծիքէն ետ կեցած է:

Իններորդ դարու իննսնական թուականներուն Միջագետքի տէրն Ահմէդ, վերոյիշեալ Իսա Իրն ալ-Շայխի որդին, Հայաստանի պատմութեան մէջ տակաւին մեծ դեր կը խաղար: 895ին խարեպատիր եղանակաւ սպաննեց Գրուրդէն՝ Աշոտ Կիւրապաղատին որդին եւ Դաւթի յաջորդն եւ Տարօն նահանգն իրեն գրաւեց<sup>105</sup>: Սակայն նա երբեք պաշտօնապէս Հայաստանի ոստիկան չէ եղած<sup>106</sup>: Մեռաւ

<sup>98</sup> Laurent, 347 (բայց ոչ 282) կը շփոթէ այս Ահմէդ Իրն Խալիդը նախկին ոստիկանին՝ Մուհամմէդ Իրն Խալիդ Իրն Եագիդի հետ:  
<sup>99</sup> էջ 218:  
<sup>100</sup> Թովմ. Արծր., էջ 221—222:  
<sup>101</sup> ՀԱ 1915, 124, 132 (= Südarmerien, էջ 301, 314), Գաղարչեան 49:  
<sup>102</sup> MSOS VII, 2, 125:  
<sup>103</sup> Այս ժամանակագրութիւնը նաեւ Laurent, 282, 347, ասած է:  
<sup>104</sup> MSOS VII, 2, 150—151:  
<sup>105</sup> Թովմ. Արծր., էջ 231, 236, 221. Համտ. Marquart, ՀԱ 1915, 133—134 (= Südarmerien, էջ 318—319):  
<sup>106</sup> Թովմաս, MSOS VII, 2, 126, Համտ. Թովմ. Արծր. Ահմէդ Իրն Իսայի անուանով զանուած զահեկանն, որ ըստ Թովմասին MSOS VIII, 2, 174, 283ին Հայաստան գրոշմուած ըլլալու է (Br. Mus. IX, 191, Nr. 429 ff.), տեղւոյ անունն չունի եւ եթէ անոր վրայ անուանուած Ահմէդ Իրն Իսան իրապէս Շէյրանեանը հասկնալու է, այն պարագային աւելի Միջագետք գրոշմուած ըլլալու է: Lane Poole բաց աստի տարին 253 կը կարգայ: Lavoix, Catalogue des monnaies musulmanes, II, Nr. 926, 927, pl. IX, բարբոթին նման զահեկաններ 287 եւ 295 տարիներէն հիստային Ափրիկէի Սուբ Իբրահիմի Մուլէյմանեանց կը վերագրէ: Բայց որովհետեւ այս երկու զահեկաններն ամենայն հաւանականութեամբ նոյն Ահմէդ Իրն Իսայէն յառաջ կու դան, ինչպէս եւ Բրիտանական թանգարանին (որուն վրայ այն պարագային տարին պէտք է 283 կարգալ), նաեւ ասոր վրայ գտնուող Ահմէդ Իրն Իսայով ուրիշ մէկն իմանալու է քան Ահմէդ Իրն Իսա Իրն ալ Շայխ: Բայց եթէ Պարսի գրածները Շէյրանեաններէն չէ գրոշմուած, յայտնի է անոնց տարիներէն: Laurent, 347, կը կարծէ՝ թէ Ահմէդ Իրն Իսա մի եւ նոյն տարին Հայաստանի ոստիկան անուանուած է, որ տարին որ Աշոտ թագաւոր

285 = 898ին<sup>107</sup>: Կ'երեւայ թէ Ահմէդ Իրն Խալիդի ձախողանքէն ետքը Խալիֆան այն համոզման եկած էր՝ թէ Աշոտ «միակ մարդն է, որ կրնայ Հայաստան կարգ ու կանոն եւ այսու խալիֆայութեան բարձրագոյն իշխանութիւնը կանգուն պահել» եւ այս պատճառաւ զանիկա Հայաստանի թագաւոր եւ իր անմիջնորդական աւատաւուն ճանչցաւ<sup>108</sup>: Ասոր յաջորդը Սմբատ իւր հօր կառավարչական տաղանդը չունէր եւ ասոր ժամանակ վերստին մահմեդական ոստիկանի մը պէտք եղաւ: 285ին (898ին) իրապէս ալ Մուհամմէդ Աֆշին իբն Աբիբ 'ս Սաջ Հայաստան իբր աւատ ստացաւ

ՅԱՆԿ ՈՍՏԻԿԱՆՆԵՐՈՒ  
ալ-Մութասիմ 218—227 (833—842):  
ալ-Հասան Իրն Ալի ալ-Բադրիսի ալ-Մամունի 218—220 (Ղազ. թ. 60, Laurent 344, թ. 74):  
ալ-Աֆշին Հայդար Իրն Կաուս ալ-Օսրուշանի 220—225 (L. թ. 75):  
Մուհամմէդ Իրն Սուլէյման ալ-Ազիլի աս Սամարքանդի 220—224 (Ղազ. թ. 61, L. թ. 76):  
Մուհամմէդ Իրն Խալիդ Բուխարախուզահ 225 (Ղազ. թ. 62, L. թ. 77):  
Ալի Իրն ալ-Հուսէյին Իրն Սիրա ալ-Քայսի, ալ-Եաթիմ 225 (Ղազ. թ. 63, L. թ. 78):  
Խալիդ Իրն Եագիդ Իրն Մագեադ ալ Շէյրանի (միայն անուանուած) (L. թ. 79):  
Ալի Իրն ալ-Հուսէյին Իրն Սիրա ալ-Քայսի, ալ-Եաթիմ (L. թ. 78):  
Համուդէհ Իրն ալի Իրն ալ-Փազլ աս Սալի L. թ. 80):  
ալ-Վաթիք 227—232 (842—847):  
Խալիդ Իրն Եագիդ Իրն Մագեադ ալ Շէյրանի 227—228 (Ղազ. թ. 64, L. թ. 81):  
Մուհամմէդ Իրն Խալիդ Իրն Եագիդ 228—232 (?) (Ղազ. թ. 65, L. թ. 82):  
պսակուեցաւ, սակայն այս անոր յառաջ բերածը ոչ մի ազդեցութիւն կրնայ ապացուցուիլ:  
<sup>107</sup> Տար. III, 2185:  
<sup>108</sup> Marquart, ՀԱ 1920, 107 (= Südarmerien, էջ 327):

ալ-Մուսալաքիլ 232—247 (847—861):  
[235էն ի վեր Հայաստան կամ ալ-Մութասի (Տարարի) կամ Իբրահիմ ալ-Մուսայեադի (Եակուբի) իշխանութեան ներքեւն էր]:  
Աբու Սայիդ Մուհամմէդ Իրն Իւսուֆ ալ-Մերվեդի (L. թ. 83):  
Անոր փոխանորդը Մուսա իր Զուբարա (L. թ. 84):  
Աբու Սայիդ Մուհամմէդ Իրն Եուսուֆ ալ-Մերվեդի † 236 (Ղազ. թ. 66, L. թ. 83):  
Եուսուֆ Իրն Մուհամմէդ Իրն Եուսուֆ 236—237 (Ղազ. թ. 67, L. թ. 86):  
Բուղա ալ-Կարիբ 238—241 (Ղազ. թ. 68, L. թ. 87):  
Մուհամմէդ Իրն Խալիդ Իրն Եագիդ ալ Շէյրանի (Ղազ. թ. 71, L. թ. 90):  
ալ-Մութադ 251—255 (866—869):  
ալ-Մուհթադի 255—256 (869—870):  
ալ-Ալա Իրն Ահմէդ ալ-Ազիլի 249—? (Ղազ. թ. 71, L. թ. 90):  
ալ-Մութամիդ 256—279 (870—892):  
[261էն ի վեր Հայաստան Ջաֆար ալ-Մուֆալիդի տիրապետութեան ներքեւ կը գտնուէր (L. թ. 92)]:  
Իսա Իրն ալ Շայխ Իրն աս Սալիլ ալ Շէյրանի 256—266 (L. թ. 91):  
Իսահ Իրն Կունդալիք 266—?:  
Իսա Իրն ալ Շայխ Իրն աս Սալիլ ալ Շէյրանի (?) † 269:  
Ահմէդ Իրն Խալիդ ?—273 (?):  
273ին Աշոտ Բաղրատունի Հայաստանի թագաւոր պսակուեցաւ:

(վերջ:) թրգմ. Հ. Վ. ԻնդլիքՅԱՆ

